Արձանագրություն N 2

Պետության կարիքների համար համակարգչային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/54/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «09» «Հոկտեմբերի» 2025թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ա. Մանուկյան
Հանձնաժողովի անդամներ Ա. Մելքոնյան, Ա. Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Մանուկյան)

Ընդունել ի գիտություն, որ 10.09.25թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2025 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 10:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2025 թվականի սեպտեմբերի 29-ին ժամը 10:00-ին: 2025 թվականի սեպտեմբրի 30-ին ժամը 11:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Բի Լայն» ՍՊԸ	levon.kesaplyan@bi-line.am	02522096
2	«Մխիթարյանս Պլյուս Գրուպ» ՍՊԸ	mkhitaryangnumner@gmail.com	42117958
3	«Հեքսադա» ՍՊԸ	sales@hexada.am	00871497

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ա. Մանուկյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Մխիթարյանս Պլյուս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայել է հրավերով պահանջվող Հավելված 1.3՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը և սարքավորումների համար տրամադրվող արտադրողի ավտորիզացիոն նամակը (MAF): «Բի Լայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ա. Մանուկյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ՝ «Մխիթարյանս Պլյուս Գրուպ» և «Բի Լայն» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերի պահանջներին անհամապատասխան և ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված

կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը 03.10.2025թ. որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտի գնահատումը և հնարավորություն տալ շտկել մասնակցին առձանագրված անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով 03.10.2025թ. ծանուցել է մասնակցին շտկման մասին: Ստորև ներկայացվում է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված շտկման ծանուցումը.

«Բի Լայն» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/54/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից ներկայացված հայտը՝ մասնավորապես 3-րդ չափաբաժնով շտկել և ներկայացնել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ առաջարկած ապրանքի համար ներկայացնել տեխնիկական բնութագրի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժնի համար նշել հստակ երաշխիքային ժամկետը, ինչպես նաև հրավերի տեխնիկական բնութագրի բոլոր «լրացուցիչ պահանջներ» բաժնի մեջ պահանջվող արտադրողի հավաստումները, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը: Շտկված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

«Մխիթարյանս Պլյուս Գրուպ» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/54/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից ներկայացված հայտը՝ մասնավորապես շտկել և ներկայացնել հրավերի պահանջով շտկված Հավելված 1՝ դիմում-հայտարարությունը, շտկելով գնման ընթացակարգի ծածկագիրը, պատվիրատուի անվանումը, ինչպես նաև հաստատել էլեկտրոնային ստորագրությամբ, ներկայացնել նաև հրավերի պահանջոց Հավելված 1.3՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, որը ևս պետք է հաստատված լինի էլեկտրոնային ստորագրությամբ, և ներկայացնել սարքավորումների համար տրամադրվող արտադրողի ավտորիզացիոն նամակը (MAF): Անհրաժեշտ է շտկել նաև Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ 1,2 չափաբաժինների մասով առաջարկած ապրանքի համար նշել հստակ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև ներկայացնել տեխնիկական բնութագրի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժնի համար նշել հստակ երաշխիքային ժամկետը, ինչպես նաև հրավերի տեխնիկական բնութագրի բոլոր «լրացուցիչ պահանջներ» բաժնի մեջ պահանջվող արտադրողի հավաստումները, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը: Շտկված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ համակարգում կատարած շտկումները հասանելի են եղել համակարգում 07.10.2025թ-ին: Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Մխիթարյանս

Պլյուս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից պահանջվող շտկումները իրականացված չեն եղել: Իսկ «Բի Լայն» ՍՊԸ-ի կողմից իրականացվել են պահանջվող շտկումները և գնահատող հանձնաժողովը գնահատելով վերջինիս հայտը և ելնելով վերոգրյալից կայացրել է հետևյալ որոշումը՝

Որոշվեց. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի պահանջները «Մխիթարյանս Պլյուս Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը պահանջները «Մխիթարյանս Պլյուս Գրուպ» ՍՊԸ-ի պահանջվող շտկումները սահմանված ժամկետում չկատարելը համարել որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Իսկ «Բի Լայն» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Ա. Մանուկյան)

29.09.2025թ. կայացած հակադարձ աճուրդից հետո մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Մանուկյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Մանուկյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. Մերժել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Մխիթարյանս Պլյուս Գրուպ» ՍՊԸ-ի հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի պահանջները՝ պահանջվող շտկումները չկատարելու համար:

«Բի Լայն» ՍՊԸ-ին ճանաչել հաղթող 3-րդ չափաբաժնի մասով և կնքել պայմանագիր՝ 376,000,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/54/1» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա՝ համաձայն ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ մասի:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/54/1» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 10.10.2025թ.-ից մինչև 19.10.2025թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Մանուկյան

Անդամներ՝ ---------- Ա. Մելքոնյան

---------- Ա. Մուրադյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

Գնառաջարկներ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/54/1

Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ Գ	0	335,000,000.00	67,000,000.00	402,000,000.00	335,000,000.00	67,000,000.00	402,000,000.00	Մերժված
1	2	Բի Լայն ՍՊԸ Ապրանքի	0	575,000,000.00	115,000,000.00	690,000,000.00	575,000,000.00	115,000,000.00	690,000,000.00	
2	1	ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ Գ	0	335,000,000.00	67,000,000.00	402,000,000.00	335,000,000.00	67,000,000.00	402,000,000.00	Մերժված
2	2	Բի Լայն ՍՊԸ Ապրանքի	0	580,000,000.00	116,000,000.00	696,000,000.00	580,000,000.00	116,000,000.00	696,000,000.00	
2	3	ՀԷՔՍԱԴԱ ՍՊԸ Ապրանք	0	587,400,000.00	117,480,000.00	704,880,000.00	587,400,000.00	117,480,000.00	704,880,000.00	
3	1	Բի Լայն ՍՊԸ Ապրանքի	0	313,333,333.34	62,666,666.66	376,000,000.00	313,333,333.34	62,666,666.66	376,000,000.00	
3	2	ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ Գ	0	335,000,000.00	67,000,000.00	402,000,000.00	335,000,000.00	67,000,000.00	402,000,000.00	Մերժված